ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

19 դեկտեմբերի 2022 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 (տասնմեկ) անդամներ: Բացակա էին Ավագ Սահակյանը, Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանը և Վալենտինա Կաղիյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էր՝</u>

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի սկսվելը համայնքի ղեկավարը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասնմեկը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի առաջին նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2023 թվականի վարձատրության չափը որոշելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2023 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2023 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

11.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու մասին:

12.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերի և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 09-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

13.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմում համայնքի ավագանու անդամների թեկնածուներ առաջադրելու մասին:

14.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անհատական կազմը հաստատելու մասին:

15.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 73-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի՝ ***ավագանին որոշում է.***

1.Որոշել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2023 թվականի վարձատրության չափը՝ 440 000 (չորս հարյուր քառասուն հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 74-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 75-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է /որոշում N 76-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի N 09-Ն հրամանի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Հաստատել «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

4.Հաստատել «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի:

5.Հաստատել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 5 հավելվածի:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 77-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների՝ ***ավագանին որոշում է.***

1.Սահմանել Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի:

2.Սահմանել տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերի տարբեր գործակիցներ համայնքի տարբեր բնակավայրերում (բացառությամբ Երևան-Սևան մայրուղուն հարակից տարածքներում գործունեություն իրականացնողների)՝ համաձայն հավելված N 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 78-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների և «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Սահմանել Բյուրեղավան համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական վճարների 2023 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները՝

1)համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) դրամ.

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 (քսան հազար) դրամ.

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

5)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

6)համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 (երկու հազար դրամ).

7) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման գումարի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 10 (տասը) դրամ.

8)համայնքի Ջրաբեր բնակավայրի տարածքում համայնքի կողմից մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց գանձվող վճարի դրույքաչափը՝ մեկ խորանարդ մետր խմելու ջրի համար՝ 130 (մեկ հարյուր երեսուն) դրամ.

9)Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ և արտոնություններ՝ համաձայն հավելված N 1-ի.

10)«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ և արտոնություններ՝ համաձայն հավելված N 2-ի.

11)«Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի ծառայությունից (շախմատի ուսուցում) օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ՝ մեկ սովորողի համար՝ 2000 (երկու հազար) դրամ.

12)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1000 (հազար) դրամ.

13)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ յուրաքանչյուր կանխարգելիչ միջոցառման համար՝ 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ.

14)համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝

ա. յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 300 (երեք հարյուր) դրամ.

բ. յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ.

գ. մեկ շաբաթվա համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ.

դ. մեկ ամսվա համար՝ 15000(տասնհինգ հազար) դրամ.

ե. մեկ տարվա համար՝ 70000 (յոթանասուն հազար) դրամ:

Մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար րոպեների հաշվարկման մեթոդ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 79-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2023 թվականի դրույքաչափերը՝

1)հասցեների տրամադրման համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

2)համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար՝ 26 000 (քսանվեց հազար) դրամ.

3)համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման համար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար.

4)ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10000 (տասը հազար) դրամ.

5)համայնքի գերեզմանատան պահպանման և սպասարկման ծառայության համար՝ 10000 (տասը հազար) դրամ.

6)համայնքային սեփականություն հանդիսացող Բյուրեղավանի Մշակույթի տան շենքի տարածքը վարձակալության տրամադրելու համար՝

ա. դահլիճի տարածքը տրամադրելու համար՝ 1 ժամվա համար 15000 (տասնհինգ հազար) դրամ,

բ.սենյակները տրամադրելու համար՝ մեկ ամսվա համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 80-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 20-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ հոդվածի 7-րդ մասերի և 14-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Սահմանել Բյուրեղավան համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար 2023 թվականի աղբահանության վճարի դրույքաչափերը՝

1) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 (երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ.

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) Հայաստանի Հանրապետության դրամ.

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ.

դ.գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 7 (յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 (ութ) Հայաստանի Հանրապետության դրամ.

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (տասը) Հայաստանի Հանրապետության դրամ.

զ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով.

է. շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու

պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով:

2.1) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 100 (մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.2) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ.

գ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3.1) Սույն որոշման 1-ին կետի 2-րդ երթակետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

2.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրել կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով:
Թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը սահմանել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի 20 տոկոսի չափով:

3.Սահմանել արտոնություններ համայնքի վարչական տարածքում սույն որոշման 1-ին կետով սահմանված 2023 թվականի աղբահանության վճարի դրույքաչափերի 50%-ի չափով՝ հետևյալ սոցիալական խմբերի համար՝
1)Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.
2) բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 81-Ն/

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Դանիել Ավագի Դանիելյանին նշանակել Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է /որոշում N 82-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Մուշեղ Հմայակի Սուքիասյանին նշանակել Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 3 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 83-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 63-Ա որոշմամբ ընդունված համայնքի ավագանու կանոնակարգի 136-րդ կետը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծել հետևյալ մշտական հանձնաժողովները և հաստատել հանձնաժողովների անդամների կազմը՝

1) գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով՝

ա. Արփինե Սուքիասյան.

բ. Աննա Մկրտչյան.

գ. Արշալույս Վարդանյան,

2) սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով՝

ա. Կարապետ Հարությունյան.

բ. Ավագ Սահակյան.

գ. Վլադիմիր Վարդևանյան.

դ. Վարդան Սուքիասյան,

3)ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

ա. Էդիկ Պիճիկյան.

բ. Արմեն Հայրապետյան.

գ. Աշխեն Մարուքյան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 09-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավանի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակը սահմանել երեք:

2.Բյուրեղավանի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմում ընդգրկել համայնքի ավագանու անդամներ Էդիկ Պիճիկյանին, Աննա Մկրտչյանին և Վարդան Սուքիասյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Համայնքային ծառայության

մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու մասին» N 09-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է /որոշում N 85-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 17-րդ կետերի 1-ին ենթակետերը, հաշվի առնելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակական կազմում ներգրավել ավագանու մեկական անդամ:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների անհատական կազմում համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրել հետևյալ ավագանու անդամներին (իրենց համաձայնությամբ)՝

1)համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմում՝ Կարապետ Հարությունյանին.

2)քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմում՝ Վարդան Սուքիասյանին.

3)կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի կազմում՝ Աննա Մկրտչյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է /որոշում N 86-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների, 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ հաստատված կարգը, 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 86 - Ա որոշումը, հաշվի առնելով Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամների ընտրության նպատակով ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի արձանագրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, Բյուրեղավան համայնքի ղեկավար,

խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Լիլիթ Ավուշյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

խորհրդակցական մարմնի անդամներ՝

Կարապետ Հարությունյան, Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ,

Սարգիս Ղազարյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Ժասմենա Մնացականովա, Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնտեսվար,

Սուլթանիկ Մելիքյան, Բյուրեղավան քաղաքի թիվ 33 շենքի լիազոր,

Վալենտինա Սամսոնյան, Բյուրեղավան քաղաքի թիվ 8 շենքի լիազոր:

2.Հաստատել Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, Բյուրեղավան համայնքի ղեկավար,

խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Լիլիթ Ավուշյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

խորհրդակցական մարմնի անդամներ՝

Վարդան Սուքիասյան, Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ,

Դանիել Դանիելյան, Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Անդրանիկ Եղիազարյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ,

Արազ Վերդյան, Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

Արմեն Ավագյան, «Բյուրեղավան» համատիրության նախագահ,

Արմեն Ստեփանյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, Բյուրեղավան համայնքի ղեկավար,

խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Լիլիթ Ավուշյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

խորհրդակցական մարմնի անդամներ՝

Աննա Մկրտչյան, Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ,

Հասմիկ Սիմոնյան, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետ,

Միքայել Միքայելյան, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

Միքայել Խաչատրյան, «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի գեղմասվար,

Պապ Բաղդասարյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ,

Մարետա Հակոբյան, Բյուրեղավան քաղաքի թիվ 12 շենքի լիազոր:

4.Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ խորհրդակցական մարմինների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալը:

5.Խորհրդակցական մարմինները գործելու են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է /որոշում N 87-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 27 -ը, ժամը՝ 17:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /որոշում N 88-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Համայնքի ղեկավար Հ. Բալասյանը նիստին ներկա ավագանու անդամներին հայտնեց, որ որ ***«Միասնություն»*** և ***«Քաղաքացիական պայմանագիր»*** խմբակցությունները իրեն գրավոր ներկայացրել են իրենց կանոնադրությունները, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները:

Հ. Բալասյանը հրապարակեց «Միասնություն» խմբակցության կազմը՝

Հակոբ Բալասյան,

Դանիել Դանիելյան,

Արփինե Սուքիասյան,

Էդիկ Պիճիկյան,

Արմեն Հայրապետյան,

Աննա Մկրտչյան,

Կարապետ Հարությունյան,

խմբակցության ղեկավարի անունը, ազգանունը՝ Էդիկ Պիճիկյան,

քարտուղարի անունը, ազգանունը՝ Արփինե Սուքիասյան:

Հ. Բալասյանը հրապարակեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կազմը՝

Վլադիմիր Վարդևանյան,

Ավագ Սահակյան,

Արշալույս Վարդանյան,

Աշխեն Մարուքյան,

խմբակցության ղեկավարի անունը, ազգանունը՝ Վլադիմիր Վարդևանյան,

քարտուղարի անունը, ազգանունը՝ Աշխեն Մարուքյան:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ